ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

0026, ք. Երևան Գ.Նժդեհի 23, հեռ.. 44-88-94 էլ.փոստ. criminalcourt@arminco.com

N-ԴԴ-8- Ֆ 525/14

ԵԿԴ/0210/11/14 06 մայիսի 2014թ.

Բողոքաբեր Ա. Սաքունցին
/ք. Վանաձոր, Տիգրան-Մեծի 59/

՝ Ուղարկվում է ՀՀ Վերաքննիչ քրեական դատարանի 05.05.2014թ. կայացրած որոշման օրինակը:

Առդիր որոշումը 1 օրինակից:

ԴԱՏԱՎՈՐԻ ՕԳՆԱԿԱՆ՝ Մ. ՈՒԴՈՒՄՅԱՆ

# ՈՐՈՇՈՒՄ

Գործ Հ ԵԿԴ/0210/11/14
Երևան

05.05.2014թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ
ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱԶՄՈՎ

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ՝ Կ. ՂԱԶԱՐՅԱՆ
Քարտուղարությամբ՝ Ա. Ջուլհակյանի
Մ. Ուղումյանի
ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ՝
Բողոքաբեր՝ Ա. Սաքունցի

Դոնբաց դատական նիստում Արթուր Սաքունցի վերաքննիչ բողոքի հիման վրա դատական ստուգման ենթարկելով <<Քրեական գործի հարուցումը մերժելու մասին քննիչ Մ.Բաբայանի 31.10.2013թ. որոշման դեմ <<Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ>> ՀԿ նախագահ Ա. Սաքունցի դիմումը քննության առնելու մասին>> Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի /այսուհետ՝ Դատարան/՝ 04.03.2014թ. որոշման օրինականության և հիմնավորվածության հարցը

## ՊԱՐԶԵՑ

**1. Գործի դատավարական նախապատմությունը և փաստական հանգամանքները.**

14.10.2013թ. Արթուր Սաքունցը գրությամբ դիմել է ՀՀ Գլխավոր դատախազին, որով խնդրել է ՀՀ քրեական օրենսգրքի 137 հոդվածի հատկանիշներով հարուցել քրեական գործ և ՀՀ Երիտասարդության և սպորտի հարցերի նախարարի տեղակալ Խաչիկ Ասրյանին ենթարկել պատասխանատվության վերջինիս կողմից 10.10.2013թ. <<Yerkir.am>> լրատվական կայքում հրապարակված հայտարարությամբ ՀՀ ԱԺ պատգամավոր Զարուհի Փոստանջյանին և նրա հարազատներին ուղղված բռնության սպառնալիքներ տալու համար:

Արթուր Սաքունցի դիմումի հիման վրա նյութերի նախապատրաստումը հանձնարարվել է ՀՀ Հատուկ քննչական ծառայությանը:

29.10.2013թ. ստացվել է ՀՀ ՀՔԾ պետին ուղղված՝ ՀՀ ԱԺ <<Ժառանգություն>> խմբակցության ղեկավար Զարուհի Փոստանջյանի թիվ ԺԽ-Ե-0287/13 դիմումը, որում նա հայտնել է, որ միանում է Արթուր Սաքունցի կողմից հանցագործության մասին հաղորդմանը և խնդրում ձեռնարկել անհապաղ միջոցներ Խաչիկ Ասրյանին պատասխանատվության կանչելու համար:

Նյութերի նախապատրաստման ընթացքում պարզվել է, որ 10.10.2013թ. Խաչիկ Ասրյանը, <<Yerkir.am>> լրատվական կայքի լրագրողի հետ զրույցի ընթացքում, անդրադառնալով ՀՀ ԱԺ պատգամավոր Զարուհի Փոստանջյանի կողմից ԵԽԽՎ-ում ՀՀ Նախագահին ուղղված հարցին, բառացիորեն հայտարարել է. <<...ցանկանում է, որ իր խոսքերը լինեն ավելի կոշտ, կոպիտ և այն ուղղում է ոչ թե Զարուհի Փոստանջյան քաղաքացուն, ոչ թե Զարուհի Փոստանջյան կնոջը, ոչ թե Զարուհի Փոստանջյան մորը, այլ՝ <<ոմն Զարուհի Փոստանջյան>> քաղաքական գործչին...>>: Ապա Խաչիկ Ասրյանը շարունակել է. <<Նույն Զարուհի Փոստանջյանին խարույկի վրա կենդանի պետք է այրել, ոչ թե որպես Ժաննա դ՛Արկի, այլ՝ որպես Ռամիլ Սաֆարովի>>:

Խաչիկ Ասրյանի վերը նշված հայտարարությունը <<Yerkir.am>> լրատվական կայքում հրապարակվել է 10.10.2013թ., ժամը 16:20-ին: Ժամեր անց, 11.10.2013թ., վերջինս, պարզաբանելով իր արտահայտած միտքը, զանգվածային լրատվության միջոցներով նոր հայտարարություն է տարածել, որում բառացիորեն նշել է. <<Հայտնում եմ, որ Զարուհի Փոստանջյանին խարույկի վրա այրելու վերաբերյալ հեղինակավոր էլեկտրոնային yerkir.am կայքում արտահայտած իմ խոսքերը բացառապես փոխաբերական իմաստ են արտահայտել՝ Զարուհի Փոստանջյանների մեջ հայոց պետականության հանդեպ ունեցած իրենց կենսական ու կենցաղային ատելությունը վերացնելու ու ընդհանուր առմամբ Զարուհի Փոստանջյանին սթափեցնելու, այլ պարագաներում նույնպես, նմանատիպ սխալներ չկրկնելու համար: Խոսքերիս չափազանցված խստությունն աննպատակ չի եղել, քանզի ես նկատի եմ ունեցել խարույկի վրա այրել ոչ թե Զարուհի Փոստանջյանի ֆիզիկական մարմինը, այլ նրա կատարած արարքը, երևույթը>>:

26.10.2013թ. Խաչիկ Ասրյանը <<News.am>> լրատվական կայքում կրկին հայտարարություն է տարածել այն մասին, որ. <<...որևէ մեկը, լինի իգական, թե արական սեռի, ով այսուհետ ևս փորձի օտար պետություններում իմ պետության, իմ ժողովրդի, իմ նախագահի պատիվն ու արժանապատվությունը ոտնահարել, արժանանալու է ավելի կոշտ և կոպիտ պատասխանների ու գործողությունների, որոնք ես հիմա չեմ մանրամասնի>>:

Արթուր Սաքունցի, Զարուհի Փոստանջյանի դիմումների քննարկման և զանգվածային լրատվության միջոցներով տարածված Խաչիկ Ասրյանի հայտարարությունների ուսումնասիրման արդյունքում պարզվել է, որ վերջինիս արարքում բացակայում է ՀՀ քրեական օրենսգրքի 137 հոդվածի 1-ին մասով նախատեսված սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ գույք ոչնչացնելու սպառնալիք տալու հանցակազմը՝ հետևյալ պատճառներով.

Վերոգրյալի հիման վրա, պատճառաբանելով, որ պետության բարձրագույն գործադիր մարմնի ներկայացուցչի փոխնախարարի կողմից զանգվածային լրատվության միջոցով հրապարակային արված վերը նշված արտահայտությունները սպանության կամ առողջությանը ծանր վնաս պատճառելու իրական սպառնալիք չեն հանդիսացել, դրանք իրականացնելու իրական վտանգ չի եղել, քննիչը 31.10.2013թ. որոշմամբ մերժել է քրեական գործ հարուցելը՝ Խաչիկ Ասրյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 137 հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի բացակայության հիմքով:

*20.12.2013թ. Արթուր Սաքունցը դիմում է ներկայացրել Դատարան՝ խնդրելով վերացնել քննիչի 31.10.2013թ. որոշումը և գործն ուղարկել նախաքննության:*

*Դատարանի 04.03.2014թ. որոշմամբ Ա. Սաքունցի բողոքը մերժվել է:*

*2 .Վերաքննիչ բողոքի հիմքերը և հիմնավորումները.*

*Ա. Սաքունցը, վկայակոչելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17, 27, 41, 278 հոդվածների դրույթները, իր վերաքննիչ բողոքում նշել է, որ հետաքննության մարմինը չի ձեռնարկել համապատասխան միջոցներ հաղորդման մեջ նշված հանգամանքները պարզելու համար, մասնավորապես՝ Խ. Ասրյանին նյութերի նախապատրաստական փուլում չի հրավիրել բացատրություններ տալու համար, որոշում կայացելիս հիմք է ընդունել լրատվական միջոցներով նրա արած հայտարարությունները: Զարուհի Փոստանջյանը նույնպես նախաքննական մարմնի կողմից րի հրավիրվել բացատրություններ տալու համար, նրանից չի պարզաբանվել, թե Խ. Ասրյանի հրապարակային սպառնալիքներից բացի եղել են արդյոք այլ սպառնալիքներ, որոնք չեն հրապարակվել լրատվական միջոցներով:*

*Նախաքննության մարմինը չէր կարող միայն լրատվական միջոցներով հրապարակված նյութերն ուսումեասիրելով գալ եզրակացության սպառնալիքի իրական լինելու վերաբերյալ: Նախաքննության մարմինը պարտավոր էր բացատրություններ վերցնել Զ. Փոստանջյանից՝ պարզելու համար, թե նա սպառնալիքն իրական է համարում, թե ոչ և նա բավարար հիմքեր ունի սպառնալիքից անհանգստանալու ու վախենալու, որ այն կարող է իրականանալ:*

*11.10.2013թ. Զ. Փոստանջյանը, մտահոգվելով իր անվտանգության համար, դիմում է ներկայացրել ՀՀ Ոստիկանության պետ Վ. Գասպարյանին՝ խնդրելով ապահովել իր և իր ընտանիքի անդամների անվտանգությունը: Ոստիկանապետը հիմնավոր համարելով Զ. Փոստանջյանի մտահոգությունը՝ վերջինիս անվտանգությունն ապահովելու ուղղությամբ ձեռնարկել է համապատասխան միջոցներ, ինչից պարզ է դառնում, որ քննարկվող հանցակազմի պարտադիր հատկանիշ՝ սպառնալիքի իրական լինելն առկա է, քանի որ դրա բացակայության դեպքում ոստիկանապետը Զ. Փոստանջյանի խնդրանքը կմերժեր ու ոստիկանության աշխատակիցները չէին ապահովի նրա անվտանգությունը:*

*Նախաքննության մարմինը պարտավոր էր օբյեկտիվ քննություն իրականացնել, որի կարևոր հանգամանքներից է համարվում գործով բոլոր մասնակիցներին բացատրություններ տալու հրավիրելը, որոնց կողմից տրված տեղեկությունները կարող են էական նշանակություն ունենալ գործի արդարացի լուծման համար: Խ. Ասրյանին բացատրություն տալու հրավիրելու արդյունքում վերջինս կարող էր հերքել կամ հաստատել ՀԿ-ն կողմից ներկայացված հանցագործության մասին հաղորդման փաստերը, ինչպես նաև Զ. Փոստանջյանին բացատրության հրավիրելու արդյունքում հնարավոր կլիներ պարզել, արդյոք քննարկվող հանցակազմում բացակայում է, թե առկա է սպառնալիքի իրական լինելու հանգամանքը, որը պարտադիր հատկանիշ է քննարկվող հանցակազմի համար:*

*Նախաքննության և դատաքննության մարմինների կողմից վերը թվարկված անգործության կամ դիտավորյալ գործողությունների արդյունքում չի ապահովվել ՀՀ Սահմանադրության 18 ու ՄԻԵԿ-ի 13 հոդվածներով երաշխավորված իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը:*

*Դատարանը վկայակոչելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 27 և 55 հոդվածները հանգել է այն հետևության, որ քննիչն ինքն է իր իրավասության սահմաններում կատարում լրիվ,*

*բազմակողմանի և օբյեկտիվ քննության, ընդունում ինքնուրույն որոշումներ ու ուղղություն տալիս քննությանն ու իր հայեցողությամբ կատարում անհրաժեշտ քննչական անհետաձգելի գործողություններ: Դատարանը նշված մեկնաբանությամբ հակասել է ՀՀ ձևավորված իրավակիրառ պրակտիկային: /տես՝ ՀՀ Սահմանադրական դատարանի 07.12.2009թ. ՍԴՈ-844 որոշման 5-րդ կետը/*

*Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 209, 376, 378 և 381 հոդվածների պահանջները՝ բողոքաբերը խնդրել է բեկանել Դատարանի 04.03.2014թ. որոշումը, ընդունել նոր դատական ակտ, վերացնել քննիչի 31.10.2013թ. քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը:*

***<u>3.Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>***

*Վերաքննիչ բողոքում նշված հիմքերի և հիմնավորումների սահմաններում վերլուծելով գործի նյութերը, Վերաքննիչ դատարանը հանգում է այն հետևության, որ բողոքը քննության առնելիս Դատարանի կողմից թույլ չեն տրվել նյութական և դատավարական իրավունքի այնպիսի խախտումներ, որոնք կհանգեցնեին դատական սխալի և հիմք կհանդիսանային կայացրած որոշումը բեկանելու համար:*

*ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17 հոդվածի համաձայն, քրեական հետապնդում իրականացնող մարմինը պարտավոր է ձեռնարկել օրենքով նախատեսված բոլոր միջոցառումները՝ գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար, մինչդեռ ի խախտումն նշված պահանջի՝ հետաքննական մարմնի կողմից պատշաճ քննություն չի կատարվել և չեն պարզվել գործի ճիշտ լուծման համար էական նշանակություն ունեցող մի շարք հանգամանքներ:*

*ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 103 հոդվածի 1-ին մասի համաձայն, քրեական վարույթն իրականացնող մարմնի գործողություններն ու որոշումները կարող են սույն օրենսգրքով սահմանված կարգով բողոքարկվել դատավարության մասնակիցների կողմից: Քննիչի և հետաքննության մարմնի աշխատակցի գործողությունները և որոշումները կարող են բողոքարկվել համապատասխան դատախազին, դատարանին՝ վերադաս դատարան: Նշված օրենսգրքով նախատեսված դեպքերում քրեական հետապնդման մարմնի գործողություններն ու որոշումները կարող են բողոքարկվել դատարան:*

*ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 175 հոդվածի համաձայն, քրեական գործ հարուցելու՝ նույն օրենսգրքով նախատեսված առիթների և հիմքերի առկայության դեպքում դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը, իրենց իրավասության շրջանակներում, պարտավոր են քրեական գործ հարուցել, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 176 հոդվածի համաձայն՝ քրեական գործ հարուցելու առիթներն են՝ 1) հանցագործությունների մասին ֆիզիկական և իրավաբանական անձանց հաղորդումները՝ ուղղված հետաքննության մարմնին, քննիչին, դատախազին. 2) հանցագործությունների մասին լրատվության միջոցների հաղորդումները. 3) հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի, դատարանի, դատավորի կողմից հանցագործության մասին տվյալների, հանցագործության նյութական հետքերի և հետևանքների հայտնաբերումը՝ իրենց լիազորություններն իրականացնելիս:*

*ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180 հոդվածի համաձայն, հանցագործությունների մասին հաղորդումները պետք է քննարկվեն և լուծվեն անհապաղ, իսկ գործ հարուցելու առիթի օրինականությունը և հիմքերի բավարար լինելն ստուգելու անհրաժեշտության դեպքում՝ դրանց*

*ստացման պահից 10 օրվա ընթացքում, իսկ նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ նշված ժամկետում կարող են պահանջվել լրացուցիչ փաստաթղթեր, բացատրություններ, այլ նյութեր, ինչպես նաև կարող է կատարվել դեպքի վայրի զննություն, հանցագործություն կատարելու [redacted] խուզարկության ենթարկվել անձինք, հետազոտման համար վերցվել նմուշներ, նշանակվել փորձաքննություն:*

*ՀՀ քրեական դատավարությանօրենսգրքի 181 հոդվածի համաձայն, հանցագործության մասին տեղեկություն ստանալու յուրաքանչյուր դեպքում ընդունվում է հետևյալ որոշումներից մեկը՝ 1) քրեական գործ հարուցելու մասին. 2) քրեական գործ հարուցելը մերժելու մասին. 3) հաղորդումն ըստ ենթակայության հանձնելու մասին:*

*ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 278 հոդվածի 2-րդ մասի համաձայն, դատարանը սույն օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով քննում է հետաքննության մարմինների, քննիչի, դատախազի և օպերատիվ հետախուզական գործողություն իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների օրինականության վերաբերյալ բողոքները:*

*ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ սույն օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմ բողոքները դատարան կարող են ներկայացվել կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեական դատավարության մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով և գործողություններով:*

*Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի առաջին մասում նշված անձինք իրավունք ունեն նաև դատարան բողոքարկել հանցագործությունների վերաբերյալ հաղորդումներն ընդունելուց, քրեական գործ հարուցելուց հետաքննության մարմնի, քննիչի և դատախազի հրաժարվելը, ինչպես նաև քրեական գործը կասեցնելու, կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումները՝ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում:*

*Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ բողոքը ճանաչելով հիմնավորված՝ դատավորը որոշում է կայացնում անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության մասին: Գտնելով, որ բողոքարկված գործողությունները կատարված են օրենքին համապատասխան և անձի իրավունքները կամ ազատությունները խախտված չեն՝ դատարանը որոշում է կայացնում բողոքը մերժելու մասին:*

*ՀՀ քրեական օրենսգրքի 137 հոդվածի 1-ին մասի համաձայն, հանցագործություն է համարվում սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ խոշոր չափի գույք ոչնչացնելու սպառնալիքը, եթե այդ սպառնալիքն իրականացնելու իրական վտանգ է եղել:*

*Քննարկվող հանցակազմի պարտադիր հատկանիշներից է սպառնալիքի կոնկրետությունը, այսինքն՝ այն հանգամանքի հստակությունը, թե ինչպիսի վնաս է սպառնում պատճառել հանցավորը, հանցակազմի մյուս պարտադիր հատկանիշը սպառնալիքի իրական լինելն է: Այն իրական է համարվում, երբ տուժողը բավարար հիմքեր է ունենում անհանգստանալու, վախենալու դրա իրականացումից, կարծում է, որ տրված սպառնալիքի իրականացումը հնարավոր է: Սպառնալիքի իրական լինելը որոշվում է ինչպես օբյեկտիվ իրադրության*

գնահատմամբ /սպառնալիքի բովանդակությունը, այն տալու եղանակը, դեպքի վայրը, ժամանակը, իրադրությունը, հանցավորի անձը և այլն/, այնպես էլ տուժողի սուբյեկտիվ ընկալումը հաշվի առնելով: Պետք է նկատի ունենալ, որ տուժողի սուբյեկտիվ ընկալումն ամեն դեպքում արարքի որակման համար ածանցյալ նշանակություն ունի, առաջնայինն օբյեկտիվ իրադրության գնահատումն է:

Քննարկվող հանցագործության սուբյեկտիվ կողմը բնութագրվում է միայն ուղղակի դիտավորությամբ: Այսինքն՝ հանցավորը պետք է գիտակցի, որ սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ խոշոր չափի գույք ոչնչացնելու սպառնալիք է արտահայտում, նախատեսի հանրության համար դրա վտանգավոր հետևանքները և ցանկանա դրանց վրա հասնելը:

Տվյալ դեպքում, նախաքննությամբ հիմնավորվել և հաստատվել է, որ պետության բարձրագույն գործադիր մարմնի ներկայացուցչի՝ փոխնախարարի կողմից զանգվածային լրատվության միջոցով հրապարակային արված վերը նշված արտահայտությունները սպանության կամ առողջությանը ծանր վնաս պատճառելու իրական սպառնալիք չեն հանդիսացել, դրանք իրականացնելու իրական վտանգ չի եղել, նյութերի քննության ընթացքում քննիչը պահպանել է պահանջվող դատավարական կանոնները, կատարել է նյութերի բազմակողմանի, լրիվ ու օբյեկտիվ քննություն, ինչը թույլ է տվել նրան հանգելու համապատասխան հետևության՝ որոշում կայացնել գործի հարուցումը մերժելու մասին:

Դատարանը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի կարգով քննության առնելով բողոքը, պատճառաբանելով, որ քննիչը ձեռնարկել է բոլոր հնարավոր և անհրաժեշտ գործողությունները ստուգելու նպատակով, արդյոք Խ. Ասրյանի գործողություններում առկա են հանցագործության հատկանիշներ, թե ոչ, որի արդյունքում պարզվել է, որ վերջինիս կողմից լրատվության միջոցով արված արտահայտությունները սպանության կամ առողջության ծանր վնաս պատճառելու իրական սպառնալիքներ չեն պարունակում, դրանք հնչեցվել են ոչ թե կոնկրետ անձի, այլ երևույթի վերաբերյալ, բացի այդ, Ա. Սաքունցի կողմից չեն ներկայացվել բավարար հիմնավորումներ՝ քննիչի կողմից նյութերի քննության ընթացքում պատգամավոր Զ. Փոստանջյանի իրավունքներն ու ազատություններն խախտելու որևէ դրսևորման վերաբերյալ և իրավացիորեն որոշում է կայացրել բողոքը մերժելու մասին:

Վերաքննիչ դատարանը գտնում է, որ Դատարանի 04.03.2014թ. դատական ակտը հիմնավոր է և բողոքում նշված պատճառաբանությունները չեն կարող հիմք հանդիսանալ այն բեկանելու համար, հետևաբար վերաքննիչ բողոքը պետք է մերժել:

ՀՀ Վերաքննիչ քրեական դատարանը՝ ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 103, 290, 393-394 հոդվածներով,

## Ո Ր Ո Շ Ե Ց

Արթուր Սաքունցի վերաքննիչ բողոքը մերժել:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 04.03.2014թ. որոշումը՝ <<քրեական գործի հարուցումը մերժելու մասին քննիչ Մ. Բաբայանի 31.10.2013թ. որոշման դեմ <<Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի

*գրասենյակ>> ՀԿ նախագահ Ա. Սաքունցի դիմումը քննության առնելու մասին>>, թողնել օրինական ուժի մեջ:*

*Որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ Վճռաբեկ դատարան՝ այն ստանալու պահից 15-օրյա ժամկետում:*

**ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ՝ Կ. ՂԱԶԱՐՅԱՆ**